22.12.2020թ. 12:00

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանի կողմից նախաձեռնած 2021 թվականի Արթիկ
համայնքի բյուջեի նախագծի հանրային բաց քննարկման

Հանրային քննարկման նիստը սկսվեց ժամը 12:00-ին;

Ներկա էին՝

Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանը, ֆինանսատնտեսական բաժնի պետ Գ. Վարագյանը, ավագանու անդամներ՝ Ռ. Վարդանյանը, Ա. Չոփիկյանը, Ա. Նիկողոսյանը, աշխատակազմի բաժնի պետեր, կազմակերպությունների աշխատակիցներ, քաղաքացիներ:

Ընթացք.

Արթիկ համայնքի ղեկավար Մ. Վարագյանի կողմից լիազորված անձ՝ հանրային քննարկման պատասխանատու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյանի առաջարկով համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ Գ. Վարագյանը ներկայացրեց բյուջեի նախագիծն ընդհանուր գծերով և նախատեսված հիմնական ցուցանիշներով:

Այնուհետ նիստը վարողն առաջարկեց սկսել հարցադրումները:

Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարց բարձրացրեց համայնքի փողոցներում թափառող կենդանիների թվի աճի վերաբերյալ և հարցրեց, թե ինչ քայլեր են ձեռնարկում տեղական իշխանություններն այդ հարցի լուծման ուղղությամբ, արդյոք համայնքի 2021 թվականի բյուջեում հատկացումներ նախատեսված են կենդանիների ստերջացման գործընթացի կազմակերպման համար:

Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ տարբեր ատյաններում բարձրացվել է թափառող շների աննախադեպ աճի, դրանց կացարանների ստեղծման և ստերջացման վերաբերյալ հարցերը: Նա նշեց, որ հարցը օրհասական է բոլոր համայնքներում: Շիրակի մարզում շների ստերջացում իրականացվում է միայն Գյումրիում, և նախնական պայմանավորվածություն ձեռք է բերվել այդ

կազմակերպության հետ, որն առաջարկել են Գյումրիում պլանավորած գործողություններն իրականացնելուց հետո ձեռնամուխ լինել Արթիկում թափառող շների ստերջացմանը: Նախնական պայմանավորվածությամբ յուրաքանչյուր շան ստերջացումը համայնքի վրա կարժենա մոտ 40 000-50 000 ՀՀ դրամ: Անհրաժեշտ պահին մենք բյուջեից կհատկացնենք այդ ծախսերը:

Արթիկի ավագանու անդամ Ո. Վարդանյանն իր դժգոհությունն արտահայտեց թափառող շների մասին օրենքի ընդունման վերաբերյալ, նշելով, որ երկրում համապատասխան խնդրով զբաղվող կազմակերպությունների բացակայության պայմաններում նման օրենքներ չպիտի ընդունի օրենսդիր մարմինը: Բացի այդ մտավախություն հայտնվեց, որ ստերջացված շները մարդկանց, հատկապես երեխաների վրա ամեն դեպքում հարձակվում են, կան նման բազում օրինակներ:

Ա. Նահապետյանի մյուս հարցը ճանապարհային լուսավորության ընդլայնման ծրագրում ներառված փողոցներին էր վերաբերում, ինչպես նաև ծրագրի ավարտման ժամկետներին:

Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ 2020 թվականին սուբվենցիոն ծրագրով նախատեսված էր մոտ 500 հենասյուների տեղադրում և լուսավորության ցանցի արդիականացնում: Քանի որ մրցույթը շահող կազմակերպությունը նախահաշվարկային ամենաբարձր գնային շեմի սահմաններում էր մրցույթը շահել, համայնքն էլ ավելի ցածր գին էր նախատեսել, այդ պատճառով համայնքային և մարզային իշխանությունները որոշեցին այդ սուբվենցիոն ծրագիրն իրականացնել հաջորդ՝ 2021 թվականին: Ծրագրի իրականացմամբ 2021 թվականին Արթիկ համայնքը գրեթե ամբողջությամբ կլինի լուսավորված:

Ո. Վարդանյանը հարց բարձրացրեց պատերազմում վիրավոր զինծառայողներին հատկացվող 50 000-ական ՀՀ դրամների տրամադրման սկզբունքի վերաբերյալ: Նա մտավախություն հայտնեց, որ համայնքի բյուջեով հնարավոր չի այդքան գումար հատկացնել բոլոր վիրավորներին, նշելով, որ ՀՀ կառավարությունն արդեն իսկ սահմանել է պատերազմական գործողություններին մասնակիցների, վիրավորների և զոհվածների ընտանիքներին տրամադրվող փոխհատուցումների չափորոշիչներն ու գումարային սանդղակները:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Գ. Վարագյանը պատասխանեց, որ այդ գումարները ՀՀ կառավարության կողմից տրվող գումարներ են, դրանք համայնքային բյուջեի հետ ոչ մի առնչություն չունեն: ՀՀ կառավարությունը հավելյալ դրամական միջոցներ է հատկացրել մարզպետարաններին, իսկ նրանք էլ իրենց հերթին համայնքներին՝ գումարը հնարավորինս արագ վիրավոր զինծառայողներին տրամադրելու նպատակով:

Ռ. Վարդանյանը հարցրեց, թե արդյոք հայրենիքի պաշտպանության համար զոհված արթիկցիների պանթեոնի կառուցման համար համայնքային բյուջեով գումար նախատեսված է: Նա կարծիք հայտնեց, որ միգուցե փողոցներ չնորոգվեն, լուսավորության ցանցի ընդլայնում չլինի, բայց պանթեոնի կառուցումը գարնանը սեղմ ժամկետներում պիտի իրականացվի:

Ա. Գրիգորյանը պատասխանեց, որ գումար նախատեսված չէ, նախագիծ-նախահաշվարկային փաստաթղթերի ձևակերպումից հետո միայն պարզ կլինի՝ ինչ գումարի մասին է խոսքը: Պանթեոնը կկառուցվի, իսկ անհրաժեշտ ֆինանսական միջոցները բյուջեից ցանկացած պահին կհատկացվի ավագանու որոշմամբ:

Ա. Գրիգորյանը ներկայացրեց համայնքում իրականացվող դրամաշնորհային ծրագրերից մանրամասներ:

Ռ. Վարդանյանը դժգոհություն հայտնեց իրականացվող ծրագրերի ավարտման վերջաժամկետների առնչությամբ, նա առաջարկեց ծրագրերով զբաղվող կազմակերպություններից հստակեցնել ծրագրերով նախատեսվող գործողությունների իրականացման վերջնաժամկետները:

<<Արթիկի մարզահամալիր>> ՀՈԱԿ-ի տնօրեն Հ. Երիցյանն առաջարկեց համայնքային բյուջեով նախատեսել ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի անցկացման ծախսերը: Նա ասաց, որ հատակը միջազգային ստանդարտներին համապատասխան վերանորոգվել է 2020 թվականին <<Աջակցություն Հայաստան>> ՀԿ-ի միջոցներով, մոտ 100 սան, մարզվելով ցուրտ պայմաններում, գրանցում են բարձր ցուցանիշներ՝ շահելով Եվրոպայի առաջնություններում իրենց

ուժերը չափելու հնարավորություններ: Անշուշտ, այդյունքներն ավելի բարձր կլինեն ջեռուցման առկայության դեպքում:

Նիստը վարող Ա. Գրիգորյանն առաջարկեց նախահաշիվ ներկայացնել ավագանուն, որից հետո կլուծվի կազմակերպությունում ջեռուցման համակարգի անցկացման հարցը:

Ա Գրիգորյանը նշեց, որ ՀՀ կառավարության միջոցներով համայնքում նախատեսվում է կառուցել տիպային մանկապարտեզ, որտեղ կարող են ընդունելություն կազմակերպել նաև մսուրային տարիքի երեխաների համար: Նա ասաց, որ բյուջեյով պետք է իրականացվեն նաև մանկապարտեզի նախագծանախահաշվարկային փաստաթղթերի ծախսերը: Ինչին պետք է պատրաստ լինել՝ ապահովելով բյուջեյի մուտքերը:

Նիստն ավարտվեց ժամը 12:45-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ
հանրային քննարկման պատասխանատու
համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար _____ Ա. Գրիգորյան

Արձանագրեց՝ Արթիկի
համայնքապետարանի կրթության,
մշակույթի, սպորտի, երիտասարդության և
հանրային կապերի պաժնի
առաջատար մասնագետ՝ _____ Տ. Չարչյան

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

22.12.2019թ. ժամը՝ 12 ⁰⁰-ին **Արթիկի համայնքապետարան**

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	ստորագրությունը
1.	[illegible]	093 44-94.00	[illegible]	
2.	[illegible]	093 20-07-50	[illegible]	
3.	[illegible]	093-00-58-43	«Արթիկի [illegible]» ՀՈԱԿ	
4.	[illegible]	094-06-67 68	հաշվապահ	
5.	[illegible]	077-60-50-35	հաշվապահ	
6.	[illegible]	077-850-880	«Արթիկի [illegible]»	
7.	[illegible]	0-94-91-55-25	հաշվապահ	
8.	[illegible]	0-94 58 37 70	հաշվապահ	
9.	[illegible]	098-12-22-26	հաշվապահ	
10.	[illegible]	093-59-51-26	հաշվապահ	
11.	[illegible]	077-90.72.72	գրասենյակ	
12.	[illegible]	094-91-50-26	[illegible]	
13.	[illegible]	077-05-16-10	հաշվապահ	
14.	[illegible]	055-74-58-41	[illegible]	
15.	[illegible]	094-91-52-17	հաշվապահ	
16.	[illegible]	0-99-11-70-11	«Արթիկի գրադարան» ՀՈԱԿ	
17.	[illegible]	094-90 40 43	«Արթիկի [illegible]» [illegible] ՀՈԱԿ	
18.	[illegible]	077 44 64 04	[illegible]	
19.	[illegible]	093 743839	գրասենյակ	
20.	[illegible]	093 19 14 22	[illegible]	
21.	[illegible]	077 014888	հաշվապահ	
22.	[illegible]	055 01 00 65	[illegible]	
23.	[illegible]	094 42 13 50	[illegible]	
24.	[illegible]	098 273 073	[illegible]	
25.	[illegible]	093 344430	[illegible]	
26.	[illegible]	093 042644	գրասենյակ	
27.	[illegible]	093 912250	[illegible]	
28.	[illegible]	077 67 11 03	[illegible]	
29.	[illegible]	077832021	[illegible]	